<<ՋԻ & ԷԼ ԻՆՎԵՍՏ >>ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2020թ.-ին Ընկերության ռազմավարությունը նպատակաուղղված է եղել այնպիսի միջնաժամկետ նպատակների իրականացմանը, ինչպիսիք են Ընկերության ֆինանսական ցուցանիշների կայունության ապահովումը, ներդրումային շուկայում գործունեություն իրականացնող ընկերությունների շարքում ամրապնդվելը, Ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի և Ն1 տնտեսական նորմատիվի ապահովումը:

2020թ.ի ընթացքում ընկերությունը համագործակցել է արժեթղթերի շուկայի մասնակիցների՝ ինչպես դիլեր բանկերի, Հայաստանի ֆոնդային բորսայի և այլ ներդրումային ընկերությունների հետ՝ ստեղծելով ամուր գործնական հարաբերություններ: Ըստ Արժեթղթերի շուկայում ձևավորված գործնական կապերի Ընկերությունը ֆինանսական շուկայում ստեղծված իրավիճակում ժամանակին իրականացված գործողությունների արդյունքում կարողացել է ապահովել Ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը:

Ընկերության պետական տոկոսային արժեթղթերը 2019թ.-ին կազմել է 55,370,000 դրամ, իսկ 2020 թ.-ին այն կազմել է 91,120,000 դրամ, ինչը նախորդ տարվա ցուցանինշի համեմատ ավելացել է 35,750,000դրամով: Նախատենվել էր 2020թ.-ի չորրորդ եռամսյակում ավելացնելու պետական տոկոսային արժեթղթերի ծավալը, սակայն որոշ հանգամանքներից ելնելով գործարքներ չի իրականացվել: Արժեթղթերի շուկայում դեռևս չունենալով կայուն դիրքեր բնականոն գործնեությունը ապահովելու համար ներգրավվել են միջոցներ: 2019թ.-ին մասնակից հանդիսացող ֆիզիկական

անձից ստացված ժամկետային փոխառությունները կազմել են 725,000 դրամ, իսկ 2020թ.ին այդ նույն ցուցանիշը կազմել է 29,985,000 դրամ:

Ընկերությունը 2020թ.-ին իր առջև խնդիր էր դրել ոչ տոկոսային եկամուտների աճ ապահովել ֆիզիական անձանց համար պետական արժեթղթերով գործարքների իրականացման արդյունքում, սակայն 2020թ.-ին երկրում տիրող իրավիճակը, պատճառ հանդիսացավ արժեթղթերի շուկայի անկայունության, ընկերությունը ռիսկային համարեց հաճախորդներից միջոցների ներգրավումը, ուստի 2020թ-ին հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունումից և հաղորդումից ստացված միջնորդավճարները չեն ապահովել ցանկալի արդյունք:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ընդհանուր ակտիվները կազմել են՝ 108,882,000 ՀՀ դրամ, ընդհանուր կապիտալը՝ 62,478,000 ՀՀ դրամ, ընդհանուր պարտավորությունները՝ 46,404,000 ՀՀ դրամ :

Ընդհանուր պարտավորությունների և Ընդհանուր կապիտալի հարաբերակցության մակարդակը 2020 թվականի ընթացքում կազմել է 0.75, իսկ ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության մակարդակը՝ 0.57:

2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության արժեթղթերի պորտֆելում գերակշռում են երկարաժամկետ պետական պարտատոմսերը: Ընկերությունն իր արժեթղթերի պորտֆելը համալրել է 10-30 տարեկան երկարաժամկետ պետական պարտատոմսերով, որը պայմանավորված է Ընկերության գործունեության երկարաժամկետ նպատակներով: Ընկերությունը մտադիր է շարունակել պորտֆելի համալրման գործընթացը և 2021թ. մասնակցել երկարաժամկետ և միջնաժամկետ

արժեկտրոնային պարտատոմսերի հերթական տեղաբաշխումներին՝արժեթղթերի շուկայի կայունության պայմաններում:

2019թ.-ի ֆիանասական տարին Ընկերությունը ամփոփել էր 857 հազ. դրամ վնասով, սակայն 2020թ.-ին ապահովել է ֆինանսական արդյունքի դրական մակարդակ շուրջ 276 հազ. դրամ: Ճիշտ է հաշվետու ժամանակաշրջանի դրական արդյունքը չի ծածկում նախորդ ժամանակահատվածի վնասը և հաշվետու տարին ամփոփվել է 582 հազ. դրամ վնասով, այնուամենայնիվ Ընկերությունը ակնկալում է , որ 2021թ-ը կլինի շահութաբեր:

Գործադիր տնօրեն Գ. Նալբանդյան

Գլխ. Հաշվապահ

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ ի դեմս՝ Ա. Ասատրյանի